ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

Ազգագրական-բանահյուսական նյութերը ժողովրդական մշակույթի գանձեր են, կարևոր սկզբնաղբյուրներ ժողովրդի ներքին կյանքի, տնտեսական զբաղմունքների, հասարակական հարաբերությունների, սովորույթների, աշխարհայացքի ու պատկերացումների հետազոտման համար: Այդ նյութերը միաժամանակ ունենալով պատմա-հանաչողական և գեղարվեստական արժանիքներ, օգտակար և ուշագրավ են ոչ միայն մասնագետների, այլև ընթերցող հասարակայնության լայն շրջանների համար:

Վերջին տասնամյակների ընթացքում խմբարշավների ու անհատ բանահավաքների միջոցով հավաքվել են արժեքավոր շատ նյութեր պատմական Հայաստանի զանազան գավառների վերաբերյալ: Հատկապես կարևոր են Արևմտյան Հայաստանին վերաբերող նյութերը, որոնց կրողներից հատուկենտ ներկայացուցիչներ են մնացել միայն: Խորհրդային Հայաստանում և Միության հայաբնակ վայրերում էլ նոր կյանքի հաղթարշավի շնորհիվ արագորեն անհետանում են պատմա-մշակութային բացառիկ հետաքրքրություն ներկայացնող շատ նյութեր, որոնց կորստից փրկելը և դիտական շրջանառության մեջ դնելը առաջնահերթ խնդիր է դարձել:

Նկատելով այս ամենից, հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհուրդը նպատակահարմար գտավ սկսելու դրանց հրատարակությունը: Այդ ուղղությամբ առաջին փորձն արվեց 1965-ին, Խ. Փորֆշեյանի «Նոր Նախիջևանի հայ ժողովրդական բանահյուսությունը» աշխատանքի լույս ընծայմամբ: Այս գրքի արտակարգ լավ ընդունելությունը ընթերցողների կողմից և շուտափույթ սպառումն ու հավելյալ պահանջարկը հանգեցրին մատենաշարի ծավալի ընդարձակման մտքին և, նյութերից բացի, հրատարակության բնույթի փոփոխվել հետազոտություններ ևս ընդգրկելուն: Այսպիսով, վերջնական տեսք ստացավ սույն մատենաշարը, որը հրատարակվելու է «Հայ ազգագրություն և բանահյուսություն (նյութեր և ուսումնասիրություններ)» վերտառությամբ: Սրանով, երկար ընդհատումից հետո, նոր ձևով ինքնին վերականգնված կլինեն հանրահայտ «Ազգագրական հանդեսի» ավանդույթները, որը քսան տարի պարբերաբար (1896—1916 թթ.) լույս է տեսել, խոշոր ծառայություն մատուցելով հայ մշակույթի հետազոտության գործին:

Մատենաշարի սույն՝ առաջին գրքում զետեղված են հանգուցյալ ազգագրագետ, պատմական գիտությունների թեկնածու Վարդան Ս. Թեմուրճյանի «Գամիրքի հայերը» պատմա-ազգագրական բնույթի աշխատությունը և ա-

մերիկահայ բանաստեղծ Ե. Տեր-Մկրտչյանի «Վանեցոնց հարսանիքը» կենցաղագրական պատկերները: Եթե Վ. Թեմուրճյանի աշխատությունը Արևմտյան Հայաստանի Գամիրք գավառի հայերի ազգագրության ամփոփ շարադրանքն է՝ կենցաղին ու սովորություններին վերաբերող համակողմանի նյութերի քննությամբ, ապա Ե. Տեր-Մկրտչյանը ներկայացնում է միայն վանեցիների հարսանեկան սովորույթները, գրված տեղի բարբառով, որով շարադրանքն ստանում է աշխույժ ու կենդանի բնույթ:

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ